

ՆԱԴԻՆԵ ԿԱՐԱՆԱՆՅԱՆ

Շիրակի պետական համալսարանի
հումանիտար գիտությունների և արվեստի
ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության
ամբիոն

narineqarhanyan@gmail.com

ՌՈՒԲԵՆ ՄԵՎԱԿԻ ՎԻՊԱԿԱՆ ԿԵՂԱՐԸ

Բանալի բառեր և արտահայտություններ. կենսագրական վեպ, Ռուբեն Սևակ, կերպարի հոգեբանություն, փիլիսոփայական հայեցակարգ, գոյության փիլիսոփայություն, պատասխանատվություն, ընտրություն, հոգեվերլուծություն, լեռը՝ որպես սիրո և մահվան հանդիպման վայր, մարդը՝ որպես բարձրագույն արժեք:

Ключевые слова и выражения: биографический роман, Рубен Севак, психология персонажа, философская концепция, философия существования, ответственность, выбор, психоанализ, гора как место встречи любви и смерти, человек как высшая ценность.

Key words and expressions: biographical novel, Ruben Sevak, psychology of character, philosophical concept, philosophy of existence, responsibility, choice, psychoanalysis, the mount as a meeting place of love and death, the man as the highest value.

Գուրգեն Մխիթարյանը, վկայակոչելով Ռուբեն Սևակի կյանքի վերջին օրերը, 1946-ին «Քառորդ դար գրականութիւն» գրքում գրում է. «Սրտառույշ, խորունկ վեպ մը կրնար դառնալ իր պարագան, եթէ մեկը սիրտ ունենար արիւնի մէջ խեղդուած բանաստեղծին կեանքը գրական օգտագործումի առարկայ դարձնել... պանծացնելու համար երիտասարդ բանաստեղծին վեհ ու հզօր կեցումը»¹:

Եղեռնագոհ գրողներից ոչ մեկի կյանքին գեղարվեստական ստեղծագործություններում այդքան մեծ չափով չեն անդրադարձել, որքան Ռուբեն Սևակի: Ռուբեն Սևակի մասին գրվել է պատմվածք (Գեղամ Սևան, «Բանաստեղծին Գողգոթան» (1967)), թատերգություն (Պերճ Զեյթունցյան, «Մեծ լրություն» (Դանիել Վարուժանի և Ռուբեն Սևակի մասին (1984), Գեորգ Գապարաճյան, «Ռուբեն Սևակի Վերջին Օրերը» (1986), Տիգրան Հաճյան, «Ռուբեն Սևակի Վերջին Օրերը» (1985) և երեք կենսագրական վեպ

¹ Մխիթարյան Գուրգեն, «Քառորդ դար գրականութիւն», 1946, Գահիրե, էջ 264-265:

(Անդրանիկ Ծառուկյան, «Մերը եղեռնին մեջ» (1987), Հայկազ Հակոբջանյան, «Սպիտակ եղելվեսներ» (1997) և Ալեքսանդր Թոփչյան, «Եվ անգամ մահից հետո», (2005)):

1985 թ. Ռուբեն Սևակի ծննդյան 100-ամյակի առթիվ սփյուռքում ստեղծվեց «Ռուբեն Սևակի անվան գրական մրցանակ»: Հանձնախմբի հիմանադիրն է Հովհաննես Չիլինկիրյանը՝ բանաստեղծի եղբորորդին, ով մեծ ներդրում ունի Ռուբեն Սևակի ներկայացման գործում: Ֆրանսիայում՝ Նիցցայից ոչ հեռու գտնվող Կանյ-սյուր-մեր քաղաքում, Հովհաննես Չիլինկիրյանի ջանքերով հիմնադրվել է «Ռուբեն Սևակի հիշատակի տունը»: 2013 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում բացվել է Ռուբեն Սևակի անվան թանգարանը: Այսօր Հովհաննես Չիլինկիրյանի արդար պահանջը կարելի է իրագործված համարել, քանի որ Ռուբեն Սևակի հիշատակը բավարար չափով պանծացվել է²:

Ելնելով հողվածի ծավալից՝ կանդրադառնանք վերջին վեպին:

Ալեքսանդր Թոփչյան, «Եվ անգամ մահից հետո»: Չժխտելով Ռուբեն Սևակի մասին գրված նախորդ երկու կենսագրավեպերի գեղարվեստական արժանիքները՝ առաջնությունը տալիս ենք Ալեքսանդր Թոփչյանի գրած կենսավեպին:

Ալեքսանդր Թոփչյանը գրաքննադատ է, թարգմանիչ, արձակագիր և դրամատուրգ: Նա Ռուբեն Սևակի երկերի հրատարակիչ է³: 1986-ին ստացել է «Ռուբեն Սևակի անվան գրական մրցանակ»: Գրողի խոսքերով՝ «Եվ անգամ մահից հետո» վեպի համար հարկ եղավ մոտ տասնհինգ տարի

² «Ռուբեն Սևակ և «Փրցուելիք Ուղեղներ» գրքում Հովհաննես Չիլինկիրյանը դժգոհում է հայ մտավորականներից եղեռնագոհ գրողների նկատմամբ ցուցաբերած անտարբերության համար, մասնավորապես ամենամոտ ընկեր Հրանտ Նազարյանից. «Սեւակի կորուստն ետք Հրանտ Նազարեանցն կ'սպասուէր որ՝ իր գրելու տաղանդով անմահացնէր, պանծացնէր Ռուբեն Սեւակի կէանքը եւ հերոսային վախճանը... գրեց իտալերէն լեզուով գրութիւններ եւ Իտալացի սիրուհիին հետ ի զուր սպասեց որ իրեն Նոպէլի մրցանակը տրուի»: // Յովհ. Չիլինկիրեան, «Ռուբեն Սեւակ և «Փրցուելիք Ուղեղներ», Patis, Der Agopian, 1985, էջ 27-28:

³ **Ռուբեն Սևակ**, Երկեր, Առաջաբան Ս. Թոփչյան, Կազմ. և ծան. Ա. Թոփչյան, Ե., Սովետական գրող 1985, 479 էջ; **Ռ. Սևակ**, Երկեր, Երկու հատորով, Կազմ. Ա. Թոփչյան, Լոյս, 1995, **Ռուբեն Սևակ**, Ձայներ (Արձակ և չափածո ստեղծագործություններ), Կազմ. , առաջաբան և ծան. Ա. Թոփչյան, Ե., Կանչ, 1992; **Ռուբեն Սևակ**, Անտիպ էջեր / Արձակ և չափածո ստեղծագործություններ, Կազմ. և առաջաբան Ա. Թոփչյան, Ե., Նաիրի, 1995, 63 էջ; **Ռուբեն Սևակ**, Հատընտիր, Կազմ. և առաջաբան Ա. Թոփչյան, Ե., Լուսաբաց, 2010, 127 էջ:

«թափ առնել»⁴: Այս առումով վեպը ուշացում չի կարելի համարել: Եվրոպական մշակույթին քաջատեղյակ լինելը նպաստում է, որ հեղինակը խորությամբ և համոզիչ կերպով կարողանա պատկերել գլխավոր հերոսի և մյուս կերպարների հոգեբանությունն ու միջավայրը: Հեղինակը չափազանց բարձր է գնահատում իր հերոսին. «Նա դարձավ մեր՝ ոչ միայն պոետական, այլև, հատկապես, բարոյական հանճարի լավագույն արտահայտությունը: Եվ այսօր, երբ նայում ենք հետադարձ հայացքով, ապա ոչ մայն մեր, այլև XX դարի համաշխարհային գրականության մեջ նրա նման երկրորդը դժվարանում ենք գտնել»⁵:

Թոփչյանը կարողացել է ինքնատիպ կերպով մեկնաբանել Ռուբեն Սևակի և՛ ստեղծագործական աշխարհը (չմատնելով իր գրականագետ լինելու հանգամանքը) և՛ նրա կերպարի հոգեբանությունը: Թոփչյանը վեպը չի կառուցում դասական ավանդներով. այն գրված է գոյության (էքզիստենցիալիզմի) փիլիսոփայության հայեցակարգով, կերպարները ներկայացնում է այդ տրամաբանությամբ: Հեղինակի փիլիսոփայական հայեցակարգը հիմնականում արտահայտված է վեպի առաջին գլխում, որի կառուցվածքային բաղադրիչներից է խորհրդանշական սյուժեների ստեղծումը (կոմսուհի Էլիզի և ընկնավոր Լիզետի հանդիպումները): Էքզիստենցիալիզմը քննում է մարդու տեղը այս անհեթեթ աշխարհում, ուստի սերտորեն կապված է հոգեբանության ու հոգեվերլուծության հետ:

Ալեքսանդր Թոփչյանի վեպը զուտ կենսագրական վեպ (կենսագրավեպ) չէ, այլ միաժամանակ կարող է դիտարկվել և՛ փիլիսոփայական վեպ (վեպում կոմպոզիցիան համադրվում է հեղինակի փիլիսոփայական գաղափարների արծարծումների հետ), և՛ պատմավեպ⁶

⁴ Ալեքսանդր Թոփչյան, Տաղտկալի, գոեհիկ, հնաբույր բաներ են գրում, հետո բողաքում, թե ընթրցողը երես է թեթել գրքից //Իրատես.am 28.09.2010 // www.irates.am/hy/daGDWvvTMoeTcoakWFwtzJZ7aC

⁵ Ալեքսանդր Թոփչյան, Պարտքի և պատասխանատվության ասպետը, էջ 102 // Ռուբեն Սևակ, 125: Հոդվածների ժողովածու: Ե., «Գասպրինտ», 2011:

⁶ Հատկանշական է, որ ռուս գրականագիտության մեջ պատմակենսագրական վեպը և պատմավեպը դեռևս կոնկրետ սահմանազատված չեն: Օրինակ՝ Ու. Կ. Բիբիտանայի «Պատմակենսագրական վեպը XX դարի ռուս և կազակական գրականության մեջ. Յու. Տինյանով և Մ. Օ. Աուզով» դոկտորական ատենախոսությունը, հակառակ վերնագրին, գլուխները վերնագրված են հետևյալ կերպ՝ «Պատմավեպը XX դարի ռուս գրականության մեջ», «Պատմավեպը XX դարի կազակական գրականության մեջ» և այլն: // Уразаева Куралай Бибиталыевна, Историко-биографический роман в русской и казахской литературах XX века: Ю.Н.Тынянов и М.О.Ауэзов, М., 2001.

(կենսագրական վեպն ըստ էության պատմավեպի ենթաժանր է), նրանում առկա են նաև քաղաքական վեպերի տարրեր (քաղաքական իրադարձությունների խոր և համակողմանի վերլուծությամբ):

«Դարասկզբին Եվրոպան համակած համաշխարհային աղետի կանխագագուսները ծնեցին Գուստավ Կլիմտի կտավները, Մտրինդերգի «Ուրվականների սոնատը», Ռուբեն Սևակի «Մոխրը» հանձարեղ բանաստեղծությունը, նրանց գործերում սերը և մահը նույնացել էին մի ակնթարթի մեջ: Դա իսկապես նորարարություն էր, նոր խոսք արվեստում»⁷, - ասում է վեպի հեղինակը:

Եթե 20-րդ դարի սկզբին Եվրոպան անուղղակի կերպով էր օդում գգում աղետը, ապա հայը, ապրելով թուրքի կողքին, այն հասկանում էր իրական և շոշափելի: Այդ մասին վկայություն ունի նաև Հակոբ Օշականը. «Եղեռնի տարին, Պոլիս: Չեմ կրնար, ճշդել օրը: Բայց եղթյակը չըրացած տեղի պիտի ունենային Ապրիլեան ձերբալուծիւնները... Վարուժան կարդաց Կարմիր հողը, այնքան խոր ու իրավ զգայնութեամբ մը, որ սարսուռ անցաւ բոլորին վրայէն: Մեռակ կ'արտասուէր...: Անոր արցունքը անցած էր գերման իր կնոջ: Մէկէն, իբր թէ սեւ ձեռքէ մը, մեր աչքերուն վերեւ կախուած զգացիւք սուգի մեծ շղարշ մը: Ամենքս ալ տեղեակ էինք մեր ժողովուրդին դէմ մութին մէջ պատրաստուած բանի մը, սեւ ու անորոշ, մեր մէջ անգեղելի»⁸:

Ալեքսանդր Թոփչյանի «Եվ անգամ մահից հետո» վեպը բացահայտում է Ռուբեն Սևակի ապրած ժամանակաշրջանը, Եվրոպայի և Թուրքիայի վարած քաղաքականության ենթախորքը:

Վեպի «**Էրոսի և Թանատոսի միջև կամ Խորշանք կյանքից**» գլուխը գոյության փիլիսոփայության մի շարք հարցեր է շոշափում. Սևակի բժիշկ լինելու հանգամանքը լիովին համապատասխանում է գրողի մտահղացմանը: Էրոսը (ըստ Ֆրոյդի՝ լիբիդոն) ազատ սերն էր, սեռական առողջ բնագոյը, որ կառավարում է մարդու ազատ վարքը և նրա կյանքի անգիտակցական ոլորտը, իսկ Թանատոսը (**կործանում/մահ**) մահվան մշտական վախն է, որ հետապնդում է անհատին: Արևմտահայ մեծ բանաստեղծի կյանքը հենց այդպիսին էր. Սևակը՝ որպես բժիշկ, ամեն օր

⁷ Ալեքսանդր Թոփչյան, Տաղտկալի, գոեհիկ, հնաբույր բաներ են գրում, հետո բողաքում, թե ընթորցողը երես է թեթև գրքից //Իրատես.am 28.09.2010 // www.irates.am/hy/daGDWvvTMoeTcoakWFwtzJZ7aC

⁸ Օշական Յակոբ, Համայնապատկեր արևմտահայ գրականութեան, հ. 9 (Արուեստագետ սերունդ), Անթիլիաս, Լիբանան, 1980, էջ 14, 24:

ականատես էր լինում մահվան, իսկ որպես հայ մտավորական՝ ականատես պիտի դառնար իր ազգի սպանողին և ինքն էլ զոհաբերվեր:

Գլխավոր հերոսը աշխարհում ունի իր **առաքելությունը**, որի համար կոչված է. դա առաջին հերթին հայ մնալու և իր ազգությունը բարձր պահելու վսեմ պարտականությունն է: Եվրոպայում ստացած կրթությունը Ռուբեն Չիլինկիրյանը պիտի ծառայեցնի այդ նպատակին: Մյուսօրյային հետաքրքիր գիծ է հանդիպումը թուրք փաշայի միակ որդի Քենանի հետ: «Մենք փոխվել ենք, շատ ենք փոխվել», - ասում է Քենանը զրույցի ընթացքում: Բայց այդ փոփոխությունը լոկ խոսքերով է ասվում. Ռուբենը անկարող է հավատալ դրան և չի կիսում դիմացինի ոգևորությունը, մանավանդ որ խոսում էր «ընդհանուր» հայրենիքի մասին: Երկու հերոսների համար բարձրագույն արժեք է **հայրը և հոր խոսքը**: Եվ եթե Ռուբենի համար հայրը բարոյական արժեքների և ազգային հոգեբանության չափանիշ է, Քենանի համար նա ապահով կյանքի մատակարար է, և նրա «ճշմարտությունը» հորից փոխանցված, արհեստականորեն որդեգրված կեղծ արժեք էր: «Հայերին սիրո խոստովանություն էր անում, որովհետև հայրն էր այդպես խոսել, իսկ իր հողի վրա քեֆ անող սերբերին «Բարբարոս» անվանում, որովհետև դարձյալ հայրիկը կամ մեկ ուրիշ անբեկանելի հեղինակություն իրեն այդպես է ասել»⁹: Ռուբենի համար ևս հայրը բարձրագույն չափանիշ է, նույնկերպ նաև «Մեծ մարդը»՝ Ռոթեոս Պերպերյանը՝ որպես հոգևոր հայր: Եվրոպայում իր ինքնությունը պահպանելու և ազգությունը պարտադրելու մեջ մեծ էր հոր (նաև հոգևոր) բացակա ներկայությունը: Սիրո ընտրության հարցում Ռուբենը կանգնում է բարդ երկընտրանքի առաջ. նա լավ է հասկանում հոր «խորամանկությունը». օրիորդ Մարիամի միջոցով իրեն լոխում ուղարկելով՝ պարտավորեցնում է կյանքը կապել ազգի աղջկա հետ: Ազգի աղջիկ/մայր-հայրենիք կամ հայր-հայրենիք **ընտրությունը** կայանում է հետևյալ կերպ. նա այդ նվիրումը գտնում է իր ներսում, իր էության մեջ և օրհասական ժամանակներում հայրենիք վերադառնալով: «Հայ մշակույթում.... հոր, հայրության գաղափարը խորհրդանշաբար նույնացել է հայրենիքի հետ, որը վտանգի մեջ էր/է, որդին՝ հայը, նրա պիտի փրկեր/փրկի»¹⁰, - նկատում է գրականագետ Լիլիթ-Լուսինե Սեյրանյանը:

Գոյության փիլիսոփայության արժեհամակարգում իր ուրույն տեղն ունի սերը՝ որպես մարդկային կյանքի շարժիչ ուժ: Սիրո ընտրության

⁹ Ալեքսանդր Թոփչյան, Եվ անգամ մահից հետո, Ե., ՀԳՄ, 2005, էջ 16:

¹⁰ Սեյրանյան Լիլիթ-Լուսինե, Չսկսվող զրույցին ունկնդիր, էջ 343

//Գրականագիտական հանդես ԺԶ, 2015:

հարցում Ռուբենը մտածում է յուրովի. դա ևս **պատասխանատվություն** է դիմացինի ճակատագրի հարցում: Ապագա բանաստեղծը սիրում է ճակատագրով ընկնավորության դատապարտված Լիզետին՝ մտածելով, որ սերն արգելում է մահը: Վրա է հասնում աղջկա ողբերգական մահը՝ որպես պատիժ «պատրաստակամության, իր անձնագոհության, սիրով բուժելու իր համոզմունքի»¹¹:

Հայելու, անդրադարձման, ստվերի և երկվորյակի արքեսիպերը ինքնատիպ մեկնություն են ստանում վեպում: Կոմսուհի Ալիսը Ռուբենին նմանեցնում է իր ազգականին, Կոնրադի արվեստանոցում առաջին անգամ Ռուբենը տեսնում է մերկ կնոջ գայթակղիչ նկար, ում դեմքը ծածկված էր հովիհարով, որի վրա պատկերված էր Ուտամարոյի էրոտիկ տեսարաններից մեկը: Հովիհարը հենց **դիմակի/անձի** արքեսիպն էր խորհրդանշում, որ բացահայտում էր նկարում պատկերած կնոջ էությունը՝ ամբողջովին սեր և կիրք/էրոս: Հատկանշական է, որ այդ նույն նկարը նա տեսնում է կոմսուհի Ալիսի տանը՝ արդեն երեսը բաց. Ալիսի ստվերը երկար ժամանակ հետապնդում էր Ռուբենին՝ մինչև մերձեցումը, մինչը բավականությունն ու վայելքը, և երբ երկու սիրահարներ վայելում են միմյանց, վրա է հասնում անկանխատեսելին ու անհեթեթը՝ մահը: Ռուբենը Ալիսին տեսնում է դիահերձարանում: Մերը ոչ միայն նախախնամություն էր, այլև ողբերգական ճակատագիր: Հերոսից անբաժան մահվան ուրվականը ոչ միայն ընտրած մասնագիտությունից էր գալիս (ամեն օր դիահերձարանում տեսնում էր մեռած մարմիններ և հաղորդակից էր դառնում Կոնրադի՝ մահը պատկերող նկարներին. առաջին անգամ նրան հանդիպում է դիահերձարանում), այլև մահը ճակատագիր է դառնում (երկու սիրելիների մահը, իր ժողովրդի սպանողը (Ադանա, հետո Մեծ եղեռն, իր ողբերգական մահը):

Հերոսին հանդիպած երկու կանանց՝ **Լիզետի** և կոմսուհի **Ալիս(զ)**ի անունների արտաքին նմանությունը ասես հայելու անդրադարձներ լինեն: Երկուսն էլ ծարավի էին սիրո և երկուսն էլ մենակ էին ու չհասկացված/**օտարված** լայնարձակ աշխարհում: Բայց եթե Լիզետի հիվանդությունն էր նրա մենության և հասարակությունից օտարվածության պատճառը, թեկուզ ողբերգական մահը ինչ-որ առումով սպասելի էր, ապա կոմսուհի Ալիսի ինքնասպանությունը ոչ միայն դիտարկվում է հոգու անաղարտությունը կայսերական նենգ խարդավանքների չզոհաբերելու համար կատարած որոշում, այլև խորքում (ենթագիտակցական աշխարհում) այլ պատճառ ենք տեսնում: Չէ որ Ալիսի երակներում էլ

¹¹ Թոփչյան Ալեքսանդր, Եվ անգամ մահից հետո, Ե., ՀԳՄ, 2005, էջ 79:

հայկական արյուն կար (մոր մեծ մայրը հայ ազնվական է եղել), ուստի օտար աշխարհում հայի գենն է դատապարտված ինքնառնչացման:

Վեպում անդրադարձման, հերոսի հիշողության ու ենթագիտակցության մեջ մնացած պատկերի տպավորությունը կյանքի մեջ մահվան, կործանման ու ոչնչացման անխուսափելիության, ճակատագրականության արտահայտություններ են: Այդպես է դիտարկվում նաև վեպի վերջին մասում ավստրիացի աղջկա մասին ներկայացվող ենթապոմեն. «Սակայն այդ քստմնելի **պատկերի**ց (ընդգծումը մերն է-Ն.Կ.) դյուրին չէր ազատվել... Գուցե նման մեկ ուրիշ պատկերով, երբ դարձյալ խարտյաշ կին էր պառկած, դարձյալ քսան տարեկան, ոտքերը լայն բացած, և կյանքի աղբյուրից **Մարդը** (ընդգծումը մերն է-Ն.Կ.) լույս աշխարհ եկավ»¹²: Մարդը նոր կյանքն է, կյանքի սկիզբը, զարունը, իսկ հիմա մահն է/կործանում/Թանատոս: Ծնունդ, կյանք, մահ եռամիասնությունը այստեղ շատ խոսուն է: Իրականություն անհեթեթ է. ժանդարմը մտածում է ավստրիացի աղջկա մասին, ինչին Ռուբենը հակադարձում է. «Դուք միայն ավստրիացի աղջիկներին եք խղճո՞ւմ»¹³: Այդպիսին է էմոցիոնալ ժանտախտով¹⁴ տառապող հիվանդ արդարությունը: Հատկանշական է, որ վեպի գլխավոր հերոսն իր նվիրումով հիշեցնում է Ալբեր Քամյուի «Ժանտախտը» վեպի բժիշկ Ռիեին, ով հակառակ պայմաններին, փորձում է բուժել մարդկանց: Այդպիսին է նաև Ռուբեն Սևակը. նա բուժում է բոլորին՝ անկախ ազգությունից: Բայց քանի որ հասարակությունն էր վարակված, ուստի և հենց բժշկվածների կողմից էլ սպանվում է: Սա է իրականությունը, սա՛ է հանճարների, ուղի և ճանապարհի հարթողների վախճանը: Իսկ Ռուբեն Սևակի կերպարի ամենաբնորոշ հատկանիշը արժանապատվությունն էր, և նա կարողանում է արժանապատվորեն կրել նաև իրեն բաժին հասած մահը. «Միլիոնավոր զոհերի ցավն էր խտացել այստեղ... Արժանապատվությունը ուժ էր ծնում»¹⁵:

Մարդը միակ արարածն է, որ գիտակցում է իր գոյության վերջավոր լինելը և ամեն ժամանակ ունի **գոյաբանական վախեր**, բայց, հակառակ դրան, ամեն մարդու մահ ընդունում է որպես առաջին մահ: Այս է պատճառը, որ հերոսի կյանքում իրականությանը հաջորդում է երազն ու մղձավանջը. քառսային է հենց իրականությունը: **Լեռը/բլուր/ստինք** գաղտնագիր է դառնում հերոսի հոգեաշխարհի բացահայտման համար:

¹² Թոփչյան Ալեքսանդր, Եվ անգամ մահից հետո, Ե., ՀԳՄ, 2005, էջ 449:

¹³ Նույն տեղում, էջ 457:

¹⁴ Տե՛ս Ռայխ Վ., Էմոցիոնալ ժանտախտ, «Գարուն», 2002/2, էջ 24-29:

¹⁵ Թոփչյան Ալեքսանդր, Եվ անգամ մահից հետո, Ե., ՀԳՄ, 2005, էջ 584 :

Գրողը լեռը դիտարկում է որպես սիրո և մահվան հանդիպման վայր (այն հոգեվերլուծության մեջ կայուն արքեստիպ է դարձել), նաև անձի հոգևոր հասունացման խորհրդանիշ: Ապագա բանաստեղծը, հաղթահարելով դժվարությունները, բարձրանում է լեռը՝ քաղելու լեռան ծերային աճած միակ ծաղիկը: Նրա առջև բացվում է մութ ու զագրելի իրականությունը. կակաչի մեջ որդեր էին հաստատվել: **Լեռը** ներկա է հերոսի ենթագիտակցության մեջ. «Դա ճանապարհն է դեպի Աստված, դեպի կատարելություն»¹⁶: Լեռը հաղթահարելով Ռուբենը պիտի հաղթահարի իրեն, պիտի կատարելագործվի, որպեսզի ցույց տա ճանապարհը, իսկ իր պարագայում դա Գողգոթայի ճանապարհ էր՝ ինքնագոհաբերում:

Սղձավանջային, անհեթեթ իրականության խորհրդանիշ է դառնում **սևը**, հեղինակային **անտրացիտափայլը**՝ որպես մահվան/Թանատոսի խորհրդանիշ: Առաջին անգամ ծաղիկի մեջ տերուտիրական էին անտրացիտափայլ որդեր, երկրորդ անգամ նույն, սրտխառնոք առաջացնող պատկեր էին ներկայացնում ճանձերը. այս անգամ արդեն թուրքական սև, դժոխային իրականությունը, ուր ամեն օր նոր ռճիր, նոր ռդերգություն է հյուսվում: Թանատոսն է տոնում իր հաղթանակը, որովհետև թուրքական իրականությունը սև էր, անտրացիտափայլ՝ ածուխի փայլ ունեցող, ուստիև ամեն ինչ այրող, ոչնչացնող, մահ տարածող, կործանող:

Վեպի հյուսվածքում ճակատագրականության ինքնատիպ մեկնաբանություն է Ռուբենի խորհրդավոր երազը. մարդկությունը վայելում է «Մեծ Սերը», ինչպես Կոնրադի նկարում էր, ինքը նույնպես մոտենում է կին-բլուրին. «ինքն էլ հսկա է, ինչպես այդ կին-բլուրը, և պատրաստվում էր մերձենալ նրան.... բայց հանկարծ հայացքը կանգ առավ ձախ կրծքին՝ անթերի, սքանչելի բլուր, որի գագաթին.... մի սև խաչ էր տնկվել....»¹⁷: Խորհրդանշական երազը Ռուբեն Սևակի ստեղծագործական աշխարհի գեղարվեստական մեկնաբանման հեղինակային ինքնատիպ մոտեցում է. «Տերն ինչ է հաղորդում իրեն այդ երկու կրծքերի պատկերով, որոնցից մեկը՝ կաթնածորը, կյանքի ակն էր, Սեր-ակն էր՝ կենսատու կաթով, մյուսն՝ այդպես հաղթապանծ, հսկայական, Մահն էր, իր Սև ակով.... Եվ ինքն այդ աղբյուրից խմեց»¹⁸: Գուցե իրական էր դոկտոր Ռուի տան նկարը կամ էլ Կոնրադը, ով հաճախ էր լինում դիահերձարանում և տպավորությունները դարձնում էր նկարների առարկա: Արդյոք ճիշտ էր նկարի վերնագիրը՝ «Մահվան հաղթանակը» թե՞ Ռուբենն էր ճիշտ, երբ ուզում էր վերնագրել

¹⁶ Թոփչյան Ալեքսանդր, Եվ անգամ մահից հետո, Ե., ՀԳՄ, 2005, էջ 67:

¹⁷ Նույն տեղում, էջ 82:

¹⁸ Նույն տեղում, էջ 85:

«Կյանքի հաղթանակը»: Պարզ է մի բան. մարդն անկարող է իրականությունն ընդունել այնպես, ինչպես կա. «ինչպես արևին կնայեին կամ մահվան, և բանականությունը պահպանել, ինչպես Ս. Հովհաննեսը Պատմոս կղզում»¹⁹:

Հերոսը ինքնաճանաչման, ինքնակատարելագործման միջոցով պիտի նվաճի Եվրոպան, իր գոյությունը պարտադրի: Հատկանշական է հանդիպումը Սիամանթոյի հետ, որ նրան հույս է ներշնչում, ով «իր օրինակով համոզեց, թե ապրելը ոչ թե մահվան քմահաճույքից, այլ մարդու կամքից է կախված»²⁰: Թե՛ Սիամանթոն, թե Ռուբեն Սևակը Եվրոպային պարտադրում են իրենց գոյությունը, որ սովորական մարդկային գոյություն չէր, այլ Եվրոպայի առևանգում, Եվրոպայում իրենց ազգության ներկայացում: Սիամանթոյին բուժող բժիշկը նրանով ճանաչում է հայ ազգին, քանի որ ոչ մի տեղ իրենց բանաստեղծին այդպիսի հոգաճություն չեն ցուցաբերում:

«Եվրոպայի առևանգումը» գլխում բացահայտվում են Սևակի կամային հատկանիշները. նա ինքնահաստատվում է, աչքի ընկնում բժշկության ասպարեզում, արդեն նշանավոր բանաստեղծի համբավ ունի և ամենակարևորը՝ նվաճում է Յաննի Աբելի՝ ազնվական աղջկա սերը: Սևակը կոտորում է նաև Յաննիի ծնողների համառությունը: Այս առումով հատկանշական է Լևոնի դիտարկումը՝ սիրուն հասնելու խոչընդոտների հաղթահարման առումով. «Հասկացիր, այդ տղան նախանձում է քեզ... Դու նրանց քթի տակից իրենց գեղեցկուհուն ես փախցնում»²¹: Ընդհանուր առմամբ սա հաղթանակ է եվրոպական միջավայրի դեմ («Մեր (հայի-Ն.Կ.) ամենափոքրիկ սխալն անգամ չեն ների»²²) և իր ինքնության հաստատումն էր, հայի տեսակի պարտադրումը:

Համաձայն Յունգի տեսության՝ սերն անհատին տալիս է մեծագույն հզորություն, սակայն միևնույն ժամանակ խոչընդոտում է ինքնարտահայտմանն ու ինքնադրսևորմանը: Այդպիսի փորձության է ենթարկվում նաև Ռուբենի և Յաննիի սերը: Յաննին որոշում է դերասանուհի դառնալ, իսկ բանաստեղծ Սևակն արգելում է, բայց հոգեպես տանջվում է գրած նամակի համար, որովհետև չկա բացարձակ ճիշտ ընտրություն: Հատկանշական է Ռուբեն Սևակի **խղճի մենախոսությունը**. «Մեղավորության զգացումին ավելանում էր նաև այն ըմբռնումը, որ

¹⁹ Նույն տեղում, էջ 139:

²⁰ Նույն տեղում, էջ 162:

²¹ Նույն տեղում, էջ 253:

²² Նույն տեղում, էջ 268:

Յաննիի պահվածքը տվյալ պահին ճշմարիտ է, բնական, արդար, որ սա ստեղծագործական արդար արարումն է»²³: Վիճակն անհեթեթ է. ինքն արվեստագետ ու բանաստեղծ է. արվեստն օգնում է վերանալ գետնաքարշ կրքերից, ինքը Պոլսում ելույթ է ունենում՝ բացելով հայաշունչ թատրոնի շրջանը, բայց իրեն պահում է քաղքենիի պես և «հոգու խորքում զգում էր, որ արածը փոքրոգություն է»²⁴: Հարցը լուծվում է նախախնամությամբ. Յաննին վերջին պահին խարդավանքների պատճառով ելույթ չի ունենում: Պատկերվածի հոգեբանական կողմը համոզիչ է, որ գալիս է գրողի կենսափորձից և անահատական իմացությունից (հեղինակը դերասանուհի Անահիտ Թոփչյանի ամուսինն է):

Եվրոպայում ինքնահաստատված երիտասարդը վճռում է վտանգավոր ժամանակներում վերադառնալ հայրենիք («Երթալ»): Հեշտ չէ որոշում կայացնելը. կա՛մ պիտի գոհաբերի իր խաղաղ կյանքը (ինչը նույնպես հնարավոր չէր. Եվրոպան ևս ներքաշվում էր պատերազմի մեջ), ընտանեկան անդորրը կա՛մ հայությունն ու ազգայինը: Հերոսն իր երջանկությունը գտել էր ընտանիքում, բայց անկարող էր դեմ գնալ իր համոզմունքներին: Հիշենք, թե ինչ էր ասում կոմսուհի Ալիսին. «Հայերը.... փրկելով Եվրոպան, կորցրեցին իրենց»²⁵:

Սևակը հայրենի հողի, հայ ազգի իսկական նվիրյալ է. նա անմնացորդ հայրենասեր է և որպես մտավորական՝ պարտավորվում է դժվար և օրհասական ժամանակում լինել իր ժողովրդի կողքին: Այդ պատճառով նա հրաժարվում է Եվրոպայում իր գոյությունը շարունակելու և բարեկեցիկ ապագայի հնարավորությունից, որն առաջարկում էր դոկտոր Ռուն՝ փոխարինել իրեն: «Այնքան աղետներ են եկել ու անցել հայերի գլխով, բայց շարունակում են մնալ այնտեղ»²⁶, - հակադարձում է նա: Հերոսը գնում է աղետին դեմ հանդիման, գնում է ծառայելու իր ազգին և եթե դրա կարիքը կա՝ զոհաբերվելու:

Հետաքրքրական է նաև Սևակի կնոջ՝ Յաննի Աբելի կերպարը. նա նույնպես նվիրումի և զոհաբերման գնացող կերպար է՝ հանուն իրենց սիրո, հանուն ամուսնու: Երբ Ռուբենն իր որոշումների համար իրեն մեղավոր է զգում, Յաննին պատասխանում է. «Քեզ ընտրելով, ընտրել եմ նաև քո ճակատագիրը, քո երկիրը»²⁷:

²³ Նույն տեղում, էջ 317:

²⁴ Նույն տեղում, էջ 322:

²⁵ Նույն տեղում, էջ 27:

²⁶ Նույն տեղում, էջ 290:

²⁷ Նույն տեղում, էջ 396:

«Էքզիստենցիան ճակատագիր-կոչում է, որին մարդը առանց առարկելու, արիաբար ենթարկվում է: Իսկ պատմությունը ճակատագիր-իրադրություն է, որին նա անտրտունջ, արիաբար դիմադրում է»²⁸: Հենց այդ առաքելության կոչումով է, որ հերոսը գնում է գիտակցված մահվան՝ չընդունելով կրոնափոխվելու առաջարկը և թրքուհի Այիշեի սերը:

Վեպի արժանիքը նրանում է, որ բոլոր կերպարները հոգեբանորեն համոզիչ են ներկայացված: Թրքուհի Այիշեի կերպարը ներկայացվում է հոգեվերլուծության միջոցով: Աղջիկը առաջին անգամ զգում է տղամարդու ներկայությունը. «Առաջին անգամ զգաց, որ իր ձեռքը տղամարդ է բռնել: Մի հաճելի դող անցավ մարմնով... Երագների մեջ... կատարվում էր մի բան, որն արթնանալուց հետո ամաչում էր հիշել...»²⁹: Գիտակցության հոսքի և հերոսուհու զգայապատրանքային ապրումների միջոցով կամաց-կամաց Այիշեն հասունում է և միամիտ ու պատանեկան սիրո ապրումները նրան դարձնում են. «տեղով հրավեր..., կանչ, քաղցր որոգայթ» և «ամեն ինչը նրա մեջ մատնում էր արթնացող էգին»³⁰: Գրողը նկարագրում է Այիշեի արտաքին հանդերձանքը՝ եվրոպականի և ասիականի անհամատեղելի խառնուրդ:

Այիշեն ևս ողբերգական կերպար է՝ օժտված դրական հատկանիշներով: Հիշենք նրա ապրումները, երբ տեսնում է հայ մեծահարուստ ընտանիքի լուսանկարները. «Նրանց էլ են մորթել... Ով է սպանել... Իր հայրը թե մեկ ուրիշը... Ու թվաց, թե իր քրոջն են մորթել, նրա ամուսնուն, երեխային...»³¹:

Ըստ Կարլ Յունգի՝ «Մեծ է նա, ով սիրում է, քանի որ սերը մեծ Արարչի ներկա գործողությունն է, աշխարհ գալու և աշխարհ դառնալու վայրկյանը: Հզոր է նա, ով ով սիրում է: Բայց զորեղ է նա, ով իրեն սիրուց հեռու է պահում»³²: Այս առումով Ռուբեն Սևակը զորեղ անձնավորություն է: Ռուբեն Սևակը ասպետի, նվիրյալի կերպար է և կամավոր զոհայնացման է գնում՝ ելնելով հասարակական դերից³³: Հատկանշական է, որ Մանասեն

²⁸ Соловьев Э. Ю. Экзистенциализм. // Вопросы филологии, N 12, 1966, с. 84:

²⁹ Թոփչյան Ա., Եվ անգամ մահից հետո, Ե., ՀԳՄ, 2005, էջ 552:

³⁰ Նույն տեղում, էջ 580:

³¹ Նույն տեղում, էջ 554:

³² Jung Carl, "The Red Book", p. 327 (Մեջբերումն ըստ Հայկանուշ Շարությանի թարգմանության // Սիրո բուլգակովյան մեկնաբանությունը հոգեվերլուծության հայեցակարգից // Հայագիտական հանդես, N 1(39), էջ 53:

³³ Մասնագիտական, դերային զոհայնությունը պայմանավորում է անձի զոհայնացումը վերջինիս անձնային առանձնահատկություններից անկախ՝ ելնելով այն դերից, որը նա կրում է: Տվյալ դեպքում Ռուբեն Սևակի զոհայնացումը

Թոփչյանի վեպը վերլուծում է հենց զոհայնացման տեսակետից³⁴: Սևակն ընտրում է ոչ թե հաճույքի, ինքնամոռացման ճանապարհը, այլ զոհաբերության, տառապանքի ու գիտակցված մահվան ճանապարհը: Ինչպես ինքն է վերնագրում Կոնրադի նկարը, ոչ թե **«Մահվան հաղթանակը»**, այլ **«Կյանքի հաղթանակը»**, իսկ այս դեպքում արժանապատիվ մեռնելը հենց կյանքի հաղթանակն է ու սիրո հաղթությունը, որ մահվան պես հզոր էր:

Հակոբիկի կերպարը դիտարկվում է բանաստեղծ Սևակի կերպարի հակադրամիասնություն, ներքին ձայն ու ներքին էություն՝ իր ողբերգականությամբ: Հակոբիկն ընտրում է լինելը, գոյությունը և հավատափոխվում է՝ դառնալով Ահմադ: Բայց նրա բանաստեղծական խառնվածքը չի կարող լինել առանց ներքին էության, առանց Գեր-Եսի և նա, չդիմանալով ներքին ձայնին, հոգու պայքարին, վերջ է տալիս կյանքին:

Վեպը հիմնականում զարգանում է երկխոսությունների միջոցով: Դոկտոր Ռուի հետ ունեցած երկխոսություններում բացահայտվում է Սևակը՝ իր հայացքներով, իսկ Քենանի հետ զրույցներում նա ավելի շատ խորհում է, քան արտահայտվում. այս դեպքում էլ ներքին խոսքն է առկա:

Հեղինակն ասես կողքից, բայց համակողմանիորեն, ներկայացնում է հայոց և համաշխարհային պատմությունը՝ ինքնատիպ մեկնաբանություններով: Գրողը ներկայացնում է թուրքական միջավայրը, Եվրոպան՝ իր մտածելակերպով և հոգեբանությամբ: Պատերազմը ցնցում է բոլոր հերոսներին. նրանք իրադարձությունների կենտրոնում են: Օրինակ՝ Ֆրանց Ֆերդինանտի սպանությունը խորապես ցնցում է Յաննիին. նա սարսափ է ապրում, կյանքում առաջին անգամ կանգնում է մահին դեմ հանդիման: Սա դեռ սկիզբն էր այն սարսափների, որ պիտի ապրեր հերոսուհին: Եղեռնը վտանգել էր մի ամբողջ ազգի գոյությունը. գրողը դնում է մարդու՝ որպես բարձրագույն արժեքի հարցը: Իսկ երբ մարդու մեջ քնում է խիղճն ու դատավորը, արդյունքը լինում է պատերազմ և ցեղասպանություն:

թելադրում է նրա մտավորական, ազգի առաջնորդ և իդեալ լինելը, որով պիտի տարբերվեր ազգային ճակատագրի բերումով զոհվելու դատապարտված ցանկացած հայից: Զոհայնացման մասին տես Առաքելյան Ք., Անձի զոհայնությունը որպես միջառարկայական ուսումնասիրության հիմնախնդիր, 145-153 // Անձի հոգեբանության և կիրառական հարցեր (Գիտական հոդվածների ժողովածու), Ե., Ասողիկ, 2016:

³⁴ Տե՛ս՝ Մանասե, Զոհաբերական նույնացումը և այլ արժարժումներ Ալ. Թոփչյանի վեպում // <https://gisher.org/manase-t24477.html>

Թոփչյանը եղեռնը չի դիտարկում միայն որպես հայոց ազգի սպանդ, այլ համարում է մարդկության ամոթ: Ըստ գոյության փիլիսոփայության՝ արժեք է ամեն մարդ, և յուրաքանչյուր մարդու մահը մարդկության մահն է:

«Եվ անգամ մահից հետո» վեպը ինչ-որ տեղ հատում է կենսագրական վեպի սահմանը³⁵. այն համադրական վեպ է. միաժամանակ նրա մեջ տեսնում ենք և՛ փիլիսոփայական վեպի, և՛ պատմավեպի, և՛ քաղաքական վեպի տարրեր: Հեղինակը եղեռնը դիտարկում է տարբեր հերոսների կողմից՝ հայ, թուրք, գերմանացի և այլն: Հարուստ է նաև վեպի պոետիկան (բանարվեստը), երբեմն խոսքը կշռոյթավորվում է կրկնություններով. երկու անգամ կրկնվում է նույն նախադասությունը. «Նկարը պարզապես շլացնող լույս էր արձակում»³⁶, «Նկարը պարզապես լույս էր արձակում կիսախավարի մեջ»³⁷, ավելի տպավորիչ, բանաստեղծական դարձնելով կնոջ մարմնի նկարագրությունը: Այստեղ պատահական բառեր և արտահայտություններ չկան: Օրինակ՝ հետևյալ պատկերը «Այիբաշի Իսմայիլի ահռելի և տարածուն փորի ընդերքից քլքլացող ծիծաղը հնչեց»³⁸. Տարածուն, ահռելի փորով մտածող մարդ, ով իր «սիրելի»³⁹ աղջկա նախընտրած մարդուն պիտի սպանի՝ առանց խղճի խայթի: Թուրքական իրականության մեջ չկա խիղճ ու ներքին դատավոր. այստեղ տիրում է միայն հարստանալու մոլուցքը, գազանը, մարդագայլը (Վրթանես Փափագյանի արտահայտությունը, պատմվածքի վերնագիրը. մարդը մարդու գայլ է), այդ էին վկայում նաև հայերից հափշտակած տարատեսակ իրերը այն սենյակում, ուր Այիբաշին բանտել էր Ռուբենին: Հատկանշական է, որ Թոփչյանը սահմանափակ քանակությամբ է մեջբերում Ռուբեն Սևակի բանաստեղծություններից՝ գեղարվեստի միջոցով յուրովի մեկնաբանելով դրանք: Սա գրողական ինքնատիպ հնարանք է հեղինակի կողմից:

«Եվ անգամ մահից հետո» վեպն արժանացել է ՀԳՄ արձակի (2005) և ՀՀ նախագահի (2006) մրցանակներ: Վեպը լայն աշխարհաճանաչում

³⁵ Գրականագետ Սիրանուշ Մարգարյանը, մատնանշելով վեպի արժանախնները, հենց այդպես էլ վերնագրել է իր հոդվածը՝ Կենսագրական վեպի սահմանը: Տես Մարգարյան Ս., Գրական զուգահեռներ, Երևան, 2009, 2009, էջ 218-236:

³⁶ Թոփչյան Ալեքսանդր, Եվ անգամ մահից հետո, Ե., ՀԳՄ, 2005, էջ 92:

³⁷ Նույն տեղում, էջ 101:

³⁸ Նույն տեղում, էջ 498:

³⁹ Մերը պահանջում է գոհաբերություն, խղճի խայթ. աղջիկը, բնականաբար, կհետաքրքրվեր Ռուբենով և գոնե դրական պատասխան տալու համար չպետք է դիմեր նման քայլի. թուրքի դեպքում անհոգի լինելը բնական վիճակ էր:

ունեցող հեղինակի երկ է և արդի կենսագրական վեպերի մեջ լավագույններից է:

Ն. Կարախանյան

**Ռուբեն Սևակի վիպական կերպարը
Ամփոփում**

Հոդվածում ներկայացվում է Ալեքսանդր Թոփչյանի «Եվ անգամ մահից հետո» կենսագրական վեպը՝ նվիրված եղեռնագոհ բանաստեղծ Ռուբեն Սևակին: «Եվ անգամ մահից հետո» վեպը ինչ-որ տեղ հատում է կենսագրական վեպի սահմանը. այն համադրական վեպ է. նրա մեջ տեսնում ենք և՛ փիլիսոփայական վեպի, և՛ պատմավեպի, և՛ քաղաքական վեպի տարրեր: Հեղինակը Ռուբեն Սևակի կերպարը մեկնաբանում է գոյության փիլիսոփայության հայեցակարգով: Այն գրված է արվեստով և արդի կենսագրական վեպերի մեջ լավագույններից է:

Н. Караханян

**Образ Рубена Севака в романе
Резюме**

В статье представлен биографический роман «И даже после смерти», посвященный жертве геноцида поэту Рубену Севаку. Роман «И даже после смерти» в какой-то мере пресекает границы биографического романа. Это комбинированный роман: одновременно в нем видим элементы и философского романа, и исторического романа, и политического романа. Автор комбинирует персонаж Рибена Севака к концепции философского существования. Он написан искусно и является из лучших среди современных биографических романов.

N. Karakhanyan

**Ruben Sevak's character in the novel
Sumarry**

The article presents the biographical novel by Alexander Topchyan "And Even after Death", devoted to Ruben Sevak, a poet who was the victim of the genocide. The novel "And Even After Death" somehow crosses the boundary of the biographical novel; it's a compelling novel, we see elements of philosophical novel, novelty and political novel in it at the same time. The author interprets

Ruben Sevak's character as the concept of the philosophy of existence. It is written with art and is one of the best in modern biographical novels.

Խմբագրություն է ուղարկվել 23.08.19
Հանձնարարվել է գրախոսության 29.08.19
Տպագրության է հանձնարարվել 15.10.19